ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2024 թվականի դեկտեմբերի 03-ին՝ ժամը 12:00 Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Դիլիջան համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Քննարկումը սկսեց Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դ.Մարգսյանը, ով ողջունեց քննարկմանը ներկա մասնակիցներին և հավելեց, որ բյուջեի նախագիծը կազմվել է հաշվի առնելով համայնքի արագ զարգացման տեմպերը և առաջնահերթությունները, խոսքը շարունակելով համայնքի ղեկավարը նշեց, որ տարեցտարի համայնքի բյուջեն ավելանում է, ի շնորհիվ աշխատակազմի կողմից ծավալած աշխատանքի և քաղաքացիների կողմից հարկային պարտավորությունները բարեխիղճ կատարելու շնորհիվ, ինչի արդյունքում համայնքում իրականացվում են տարբեր տնտեսական և սոցիալական ծրագրեր, այնուհետև խոսքը փոխանցեց Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Վ.Գրիգորյանին, ով մանրամասն ներկայացրեց բյուջեի նախագիծը ըստ մասերի՝

- Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներ և ծախսեր
- Պահուստային ֆոնդ
- ինչպես նաև ներկայացրեց ՀՀ կառավարության կողմից համայնքին հատկացված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրված դոտացիան, նշեց, որ նախորդ տարվա համեմատ գրեթե 15 % ավելացել է դոտացիայի ծավալը, այնուհետև ուղիղ համեմատականներ անցկացրեց համայնքի նախորդ տարիների բյուջեների միջև և հավելեց, որ համայնքի բյուջեն կազմված է հավասարակշռված կարգով՝ եկամուտները և ծախսերը չեն գերազանցելու միմյանց (բյուջեում դեֆիցիտ և հավելուրդ չի նախատեսվում):

Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից հարցեր բարձրացվեցին կապված բյուջեի վարչական մասում շրջակա միջավայրի պաշտպանությանը ուղղված գումարի հետ, ինչին ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Վ.Գրիգորյանը հստակ պատասխանեց հուզող հարցին:

Մասնակիցների կողմից քննարկվեցին բյուջեում առկա եկամուտները և ծախսերը, հարց ու պատասխանի միջոցով դրանք առավել հստակեցվեցին, որից հետո մասնակիցները տվեցին իրենց հավանությունը՝

Դիլիջան համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծին ըստ հետևյալ մասերի՝

- Վարչական մասի եկամուտներ
- Վարչական մասի ծախսեր
- Ֆոնդային մասի եկամուտներ
- Ֆոնդային մասի ծախսեր
- Պահուստային ֆոնդ

Քանի որ այլ առաջարկություններ և հարցեր չհնչեցին, քննարկման վարող և պատասխանատու՝ Դ.Սարգսյանը քննարկումն համարեց ավարտված:

Քննարկման վարող և պատասխանատու

Համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան _____

Արձանագրող

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման

և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ՝ Վարդան Մկրտչյան _____